

ՏԱՄՆ ԵՒ ՎԵՏԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի է, կես տարվանը 6 ռուբլի:  
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисть. Редакція «Мшакъ».  
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(Բացի կիրակի և առն օրերից):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիցիւով:

Յայտարարութիւնների համար վճարում են  
խրաբանչիւր բառին 2 կոպեկ:

ՆԵՐԿԱՅ 1888 ԹԻՒՆ

## „ՄՇԱԿ“

### ԳՐԱԿԱՆՆԵՐՆԵՐ ԵՒ ՔՆՆԱՔԱՆՆԵՐ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոպրիետարով: Մեր կը ստանանք սեփական  
ՀՆՈՒԱԳՒՐՆԵՐ:

«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, կես տարվանը 6 ռուբլի:  
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների մի-  
կրկնում, Թամարյանի տանը):  
Կայտարարութեան ուրիշ քաղաքները «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հաս-  
ցեով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-  
nal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

#### ԲՈՎԱՆՆԵՐԻ ԹԻՒՆ

ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի քանի նկատողու-  
թիւններ. Նամակ վերին-Վրացիացի. Նամակ Ա-  
խալցեալացի. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-  
ԹԻՒՆ. Նամակ Ամերիկացի. Արտաքին լուրեր.—  
ՀՆՈՒԱԳՒՐՆԵՐ.—ՊԱՏԱՍՊԱՆՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-  
ԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Թիբեթի-  
ացի.

#### ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

##### ՄԻ ՔԱՆԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Վիճնայից ստացած «Հանդէս Ամսօրնայի»  
վերջին յունվարի տետրակի մէջ «Ռուսաստանի  
զբաղմանութիւնը» վերնագրի տակ մի քանի նկա-  
տողութիւններ կան մեր աշխարհաբար—գրական  
լեզուի մասին: Բաժանելով աշխարհաբար լեզուն  
երկու ճիւղի, այն է արևմտեան և արևելեան,  
կամ սովորական լուրջով թիւրքահայերի և ուս-  
տանայերի բարբառների, յիշեալ ամսալիւրը այն

միտքն է յայտնում, որ թիւրքահայերի գրականա-  
գէտները դեռ ներկայ դարու առաջին քսուորդի  
մէջ աշխատում էին հիմնել մի հաստատուն  
աշխարհաբար լեզու, մինչդեռ ուստանայերի մէջ  
այդ շարժումը սկսված է միայն երկրորդ քսուոր-  
դից, և որ այն ժամանակ, երբ արդէն թիւրքա-  
հայերը հաստատուն աշխարհաբար ունէին,  
ուստանայերը չունէին նոյն իսկ այն հաստատո-  
ւած աշխարհաբար լեզու: Թողնելով մի կողմ այն նը-  
շանակութիւնը, որ ունեն մեր աշխարհաբար լեզ-  
ւի համար Այտուրեան վարդապետը, Ս. Նազար-  
եան, խաչատուր Աբովեան, և Միքայէլ Նալ-  
բանդեան, որոնց վրա ակնարկութիւն կայ ամ-  
սագրի յօդուրդի մէջ, չեն կարող կրկին անգամ  
չը շեշտել այն սխալ հայեացքի վրա, որով վա-  
րակված են ոչ թէ միայն Պոլսի հայ գրականա-  
գէտները, այլ և Վիճնայի և Վենետիկի Միսի-  
թարեանները, որոնք միջոց ունեն ակելի քըն-  
նադատ արար վերաբերվելու դէպի մեր աշ-  
խարհիկ լեզուի առաջ դալու, զարգացման և ան-  
մասն հարցը:

Մենք միանգամայն համաձայն ենք այն կէտի

հետ, որ ինչպէս թիւրքահայերի աշխարհաբարը  
ճնշված է թուրքերէն և ֆրանսերէն լեզուների  
ազդեցութեան տակ, այնպէս էլ ուստանայերի  
աշխարհաբարը ազատ չէ ուստ լեզուի ազդեցու-  
թիւնից: Այդ երևոյթը, որը ինքն ըստ ինքեան  
զուցէ ուրախակի էլ չէ լեզուի ինքնուրոյն դար-  
գացման տեսակէտից, ունի իր աւելի ծանրակշիւ  
պատճառները, և կապված է երկրի, այսպէս ա-  
սած կուլտուրական և քաղաքական պայմանների  
հետ, և լեզուի այդ վիճակի դէմ կուրծք այնքան էլ  
հեղ չէ, ինչպէս կարծում են թիւրքահայերի մէջ  
իրանց աշխարհիկ լեզուի պաշտպան կարծող զը-  
րդները: Մեզ յայտնի է, թէ ընդհանրապէս ինչ-  
կարծիք ունեն այդ գործընդեր մեր արևմտեան  
և արևելեան աշխարհիկ բարբառների մասին, և  
տարբարողաբար, այդ կարծիքը այնքան  
միակողմանի է, և այնպիսի սխալ ընթացք ունի,  
որ ոչ թէ միայն չի նպաստի թիւրքահայերի  
աշխարհիկ բարբառի կանոնաւորվելուն, այլ ակե-  
լի կը խճճի նրան, ինչպէս այդ պիտի արդէն նը-  
կատվում է «Մենք դեռ սրանից յիսուն տարի  
առաջ ունէինք հաստատուն աշխարհաբար լե-  
զուն» —ասում են թիւրքահայերի գործընդեր, և  
Միսիթարեանները: Շատ լուս Բայց ինչպէս եղաւ,  
որ ամբողջ յիսուն տարի անցնելուց յետոյ, ձեռ-  
նարկում ոչ թէ միայն աւելի է հաստատուն  
չեղաւ, այլ և հէնց այժմ չէ ներկայացնում մի  
փոքր ինչ կանոնաւոր լեզու: Վերջերք թիւրքա-  
հայոց ինքնուրոյն գրութեանը, թարգմանութիւ-  
նները, լրագիրները և դուք կը համոզվէք, որ այդ  
բոլորի մէջ միանգամայն խեղդված է ժողո-  
վը դրա կարգի և զուգուր տարրը, և դրա փոխա-  
րէն արբանակումը է դրա բարձր, և այն էլ ոչ  
թէ հայոց գրաբարը, այլ ֆրանսիական  
և թիւրքական լեզուների ազդեցութեան տակ  
խեղդված գրաբար, եթէ միայն կարելի է դրա  
բարձր անունը տալ դրան:

Ռուսահայերի այժմեան աշխարհաբարը մի ո-  
րոշ ուղղութիւն ունի. նա ձգտում է բացառա-  
պէս ժողովրդական տարրի վրա հիմնվել, և մի և  
նոյն ժամանակ հաւատարիմ մնալ հայոց լեզուի  
իր մէջ կը պարունակէ դանազան դասերու ներ-  
կայացուցիչներ: Այսպէս կը տեսնենք ոսկերիչ  
մը դատարարի մը քով, վաճառական մը արտա-  
քին գործոց նախարարութեան պաշտօնէի մը  
հետ, տեղական սեղանաւոր մը եւրօպական մեծ  
պանդայի մը գլխաւոր պաշտօնէի մը հետ. ի  
հարկէ, ամեն դասակարգի ներկայացուցիչներ չեն  
կրնար միասին գտնուիլ: Գլխաւոր պակասու-  
թիւնն այն է, որ Հայաստանի գլխաւոր քաղաք-  
ներէն Պոլսի գտնուող ոչ ոք կը գտնուի նորոն-  
տիք քաղաքական յարցերի մէջ:  
Քաղ. յարցովոյ ատենակազմն է Սիմոն պէյ Մազ-  
աւետեան, որոյ անունը քիչ թէ շատ ծանօթ լի-  
նելու է ձեռք վասն զի 1884 թուականին դար-  
ձաւ քաղ. յարցովոյ ատենակազմի և մեծ դեր  
կատարեց Ներսէս Պատրիարքի կաթողիկոսական  
ընտրութեան մէջ: Այդ խնդրոյ մէջ Սիմոն պէյի  
հետեւած քաղաքականութիւնն այն արևելեան  
բազմակիսիւն քաղաքականութիւնն էր, որոյ  
զարգանաց չեն կարող թափանցել մերիներու  
նման մտքերէն: Տեղը չէ պատմելու, երկու բառով  
ամփոփեմ. Սիմոն պէյ Մազաւետ մեծապէս փա-  
րագեցաւ և աշխատեցաւ, որ Ներսէս Պատրիարք  
կաթողիկոս ընտրուի. նաև մեծապէս նպաստեց  
Ներսէս Պատրիարքի կաթողիկոսական հրաժար-  
ներուն:

Սիմոն պէյ Մազաւետն և տառազրութեանը  
Եւ այդպիսի որոշ ընթացք ունենալով, ուստա-  
հայերի աշխարհիկ լեզուն իրաւունք ունի սպա-  
սելու, որ նրա կանոնաւորվելու գործը անարգել  
առաջ կը գնայ, և մտիկ պապագայում մենք ան-  
կասկած կունենանք բաւական կոկիկ աշխարհա-  
բար: Վերջերք ուստահայերի մէջ լայն տեսած  
գրքերը և պարբերական հրատարակութիւնները,  
և դուք կը համոզվէք այդ ճանապարհի մէջ,  
դուք կը համոզվէք, որ խաչատուր Աբովեանի,  
«Հիւսիսակալի», Միքայէլ Նալբանդեանի ժամա-  
ակ գործածված լեզուի, և մեր այժմեան լեզուի  
մէջ, որը գործ են անում մեր այժմեան գործըն-  
դեր, շատ մեծ տարբերութիւն կայ: Մեր այժմեան  
գրքերների մէջ աշխարհիկ լեզուն կատարեալ  
քաղաքացիութիւն է ստացել և այդ զարգացնե-  
րում գործ դրվող ամեն տեսակ դասագրքերը ար-  
դէն բաւական պապացոյց են նրա զարգացման  
Բայց փորձեցե՛ք թերթիկ թիւրքահայ գրութեանը,  
կարգացե՛ք Գուրեանի, Պէշիքթաշեանի, և նոյն իսկ  
Ներսէսի և Տիւսարի հեղինակութիւնները, թերթի-  
ցէք Մամուրեանի, Չիլիկաբեանի, խթիւսեանի  
թարգմանութիւնները, վերջապէս կարգացե՛ք Պոլ-  
սի հայ լրագրութեան մէջ նոյն իսկ յայտնի զը-  
րդներին և Միսիթարեանների աշխատութիւննե-  
րը,—դուք կը հասկանաք, թէ ինչպէ մինչև այժմ  
էլ արևմտեան հայոց գրականութեան մէջ չէ  
անկատարում այն միտքը, որ կարելի է և պէտք է  
գրել գրաբար լեզուով, որ ժողովրդական տարրը  
չը պէտք է մտնի լեզուի մէջ, որ աշխարհաբար  
չինչ յուսալի ապագայ չունի, որ աշխարհաբար  
ը պէտք է թողնի գրաբար լեզու, և այն է և այժմ:

Այդպիսի կարծիքների դեպքում լեզուն տակ  
գտնվելով արևմտեան աշխարհաբար, ի հարկէ  
շատ էլ առաջ չէր կարող գնալ, և հէնց այդ  
կարծիքների մէջ պէտք է որոնել այն դադարն ի-  
քը, թէ ինչպէ նոյն իսկ կէս դար անցնելուց յե-  
տոյ թիւրքահայերի աշխարհիկ լեզուն ակելի  
ստոր դրութեան մէջ է գտնվում: քան թէ ուստա-  
հայերի համեմատաբար ակելի նորածին աշխար-  
հիկ լեզուն:

#### Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

##### ՆԱՍԱԿ ԹԻՒՐԻՍՏՅՈՒՆ

##### Կ. ՊՈԼԻՍ, 3 յունվարի

Կազանդի նուէրնիս եղաւ Քաղաքական Ժողովոյ  
վաւերացումը կառավարութեան կողմանէ: Գեկ-  
անմբեր 28-ին ի Պատրիարքարան կը գումարուէին  
կրօն. և Քաղաքական Ժողովներն և կորոչէին, որ  
Պատրիարքը թաքրելի մը գրելով առ նախա-  
րարն դատական գործոց, ստիպողական կերպով  
խնդրէ Քաղ. Ժողովոյ վաւերացումը: Նոյն օրը  
Պատրիարքը կը գրէր այդ թաքրելի, վերապիս  
կրկնելով իւր հրաժարական. դեկտեմբերի 30, չո-  
րեքշաբթի օր, ձեւովէ՛ք փաշա կը խրկէր վաւե-  
րացման պոչը լրջութեան, հինգշաբթի դեկտ.  
31, «Արևելք» կը հարգորէր այդ լուրն, ժողո-  
վուրդը գոհ կը մնար, վասն զի վերջապէս կունե-  
նայինք կանոնաւոր կերպով ազգային իշխանու-  
թիւն մը:

Մեր ազգային գործերու ակելի մտնէն տեղե-  
կութիւն մը կրնայ միայն ձեռք գաղափար մը  
տալ թէ ինչ կը նշանակէ Քաղաքական Ժողով  
չունենալ: Գրեթէ ամեն գործողութիւն կը դադ-  
րի փոքր ու մեծ, երկրորդական թէ կենսական  
խնդիրներ կը յուզուին, գաւառներէն կարեոր  
հարցեր կը տեղան ի Պատրիարքարան. ոչ կրօ-  
նական ժողով, ոչ Պատրիարք առանձին ոչինչ  
կրնան ընել, միայն այս երեք իշխանութեանց  
միացումը կը կազմէ ազգային գործադիր իշխա-  
նութիւնն, որ կը կոչուի Թիբեթիոյ Հայոց Ազգային  
կենտրոնական վարչութիւն:

Առաջին անգամն է, որ Քաղաքական Ժողովոյ

մը վաւերացումն այսքան կերպարի և այդ ինչպէս  
ըսած ենք, արդէն բուն իսկ հայ երեսօտանունե-  
րու մեղօքն է: Ձանացին ումնք այստեղ արդա-  
բացնել այդ մեղքն ըսելով թէ՛ «կառավարու-  
թիւնը երկրին կառավարութիւնն է, մեր Սահմա-  
նադրութիւնը կառավարութեան մէկ օրէնքն է,  
երբ այդ օրէնքին դէմ դեղծում կայ, պարտաւոր  
ենք դիմել նոյն իսկ կառավարութեան»: Այս ա-  
ռարկութիւնը դուցէ տրամաբանական երկի, սա-  
կայն մեր քաղաքականութիւնն եղած է միշտ մեր  
գործերն մեր մէջ կարողաղել, ըստ բաւականին  
անկախ կերպով և երբեք հակառակ չը շարժե-  
լով կառավարութեան շահուց, առիթ չընծայել  
նմա մեր Սահմանադրութեան վրայ հոկել. արդ-  
անոնք, որ ներքին խնդրոյ մը համար, ակելի  
կամ նուազ քուէներու խնդրոյ մը համար կուզեն  
Պատրիարք, Ազգ. Ժողով իբր օրինազանց նկա-  
տել տալ և կառավարութեան միջամտութիւնը  
հրաւիրել մեր գործոց մէջ, միթէ կրնան նկատուիլ  
ազգին բարիքն ուղղող հայեր: Իրենք ալ կը զգային,  
կառավարութեան այդ դիմողներն, թէ որքան  
վատ գործ մը կընէին, այնպէս որ և ոչ իսկ  
համարձակեցան, ոչ մին անոնցմէ համարձա-  
կեցաւ, իւր անունը յայտնել. եթէ այդքան օ-  
րինաւոր էր իրենց գործն, էր այսքան գաղափար-  
ղի գործել: Ոչ ոք համարձակեցաւ պաշտպանու-  
թեան տող մը գրել Պոլսոյ թերթի մը մէջ այս  
սկերտներու համար: Եւ այդ սկերտներն այսօր  
ամօթահար և խայտառակեալ են, վասն զի, հա-  
կառակ իրենց փախաբանաց և շահախնդրու-  
թեան, կառավարութիւնը ըստ ջրան և ուրիշ  
տարիներու ասանդութեանց վաւերացուց մեր նոր-  
ընտիր Քաղաքական Ժողովը, որոյ պաշտօնավա-  
րութիւնը կը տեւ երկու տարի:

Նոր Քաղաքական Ժողովը կը բաղկանայ ըստ  
օրինի սասն և չորս անդամներէ: Այդ ժողովը

Յանկալի է, որ զէթ այժմ թիւրքահայ գրողները ուշադրութեան առնէին աշխարհիկ լեզուի դարգացման այդ փորձիկ գաղափարը, ապա թէ ոչ արևմտեան աշխարհաբարը դժուար թէ կարողանայ անել և զարգանալ այն գրաբան ներբողներով որոնք, «ի պաշտպանութիւն արդի հայկական լեզուի», դուրս են բխում Պոլսի դրողների գիրքակեր գրիչների տակից...

Խ. Մ.

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆ-ԱՊՐԻԼԻՍԻՑ

Յունվարի 7-ին

Ներկայ 1888 թիւի Արուսիսի փոստատուներ, որ մինչև այժմ պահում էր ազգուցիկներին հաշուով, արդէն անցնում է կառավարութեան ձեռքը: Առաջ խօսում էր, որ այստեղի փոստատու կից կը շինվի նոյնպէս և հեռագրատուն, երբ որ փոստատունը կառավարութեան ձեռքը անցնի այժմ երբ այդ իրագործվից, պէտք է յուսալ, որ շուտով հեռագրատուն և կունենանք: Ներկայումս մեր Արուսիսը իր շրջակայ գիւղերով շատ դժ է մէջտեղի բերում աջակցութիւնից, որը ամեն կերպ նպաստեց այսպիսի մի խումբ, ամեն հարգազարգացութիւնից զուրկ տեղում, որպէս Արուսիսն է փոստատուն հաստատելուն. միայն վերջին ժամանակում փոստային վարչութեան մի կարգադրութիւնը բաւական դժուար դրութեան մէջ է դրել Արուսիսին և շրջակայ գիւղերին: Մի քանի ամիս առաջ այստեղի փոստատունը հրաման ստացաւ, որ բոլոր կապոյտները (ПОСЫЛКИ), որոնք Արուսիսից ճանապարհով են ուրիշ տեղեր, նախօրէն ներկայացվին Օրդուբաթի մարտատան վարչութեան. այդ պատճառով էլ ներկայումս Արուսիսի փոստատանը չէ ընդունում ոչ մի կապոյտ, որ իր վրա մարտատան կից չէ կրում Այս կարգադրութեան զորութեանը ազգուցիկը և շրջակայ գիւղացիքը, որոնք թէ իրանց նամակները և թէ կապոյտները միշտ Արուսիսի փոստով են ուղարկում և ստանում, այժմ ստիպված են իրանց կապոյտները տանել Օրդուբաթ՝ ներկայացնել մարտատան վարչութեան և կրկին յետ բերել Արուսիս, այստեղի փոստատունը ձգելու. իսկ շատ անգամ էլ գիւղացիք այդ անյարմարութեան պատճառով հրաժարվում են իրանց ապրանքը փոստով ուղարկելու: Արուսիսից իրանց կապոյտները Օրդուբաթ տանելով կարող են հնչեց այնտեղի փոստատունը ձգել, բայց բանը այս է, որ այն ժամանակ այստեղի փոստատունը կը վնասվի և բացի այդ, այն ժամանակ հարց է ծագում. ինչի

համար է Արուսիսի փոստատունը, երբ մենք պէտք է աւելորդ ծախսեր անելով մեր ապրանքը ուրիշ տեղի փոստատունը յանձնենք: Այս անյարմարութիւնը փոստի արդիւններին էլ վնասում է, ուստի և հարկատու է անշուշտ առանձին ուշադրութիւն դարձնել այդ հանգամանքի վրա: Առաջ խօսում էր այստեղ, որ իբր թէ մտադրութիւն կայ յիշեալ անյարմարութիւնը հեռացնելու համար նշանակել Օրդուբաթի մարտատան ծառայողներին մէկին, որ շարքով երկու անգամ, փոստի օրերին, գալ Արուսիս և փոստով ուղարկելի կապոյտները քննել ու կնքել, բայց մինչև այժմ դեռ այդպիսի կարգադրութիւն չէ եղել:

Գեկտեմբերի 31-ին այստեղի օրիորդաց ուսումնարանում կայացաւ մանկական երեկոյ և տոնածառ. ուսումնարանի մանուկները համար Ներկայ էին նոյնպէս և ծնողները: Այս բանում պէտք է չնորոհակ լինել ուսումնարանի մի հողաբարձուից և ուսուցչական խմբից, որոնք աշխատել էին մանկական երեկոյն աւելի զուարճակ դարձնել, միայն դժբաղդաբար տեղի սաստիկ փոքրութիւնը մեծ անյարմարութիւն առաջ բերեց: Տօնածառը, թիֆլիսից բերել տուած մանկական խաղալիքներով, գեղեցիկ կերպով դարձրած էր: Մանուկներին թղթեայ քաղցրերով զանազան տեսակ մրգեղէններ բաժանվեցան: Երևոյ նոյններին հիւրասիրեցին թէյով: Վերջում եղան պարեր և երգեցողութիւն: Ծնողները շատ սիրով վերաբերվեցան տոնածառին, որ Արուսիսում երկրորդ անգամ է միայն սարգվում:

\*\*\*

ՆԱՄԱԿ ԱՍՍԱՅԻՍԻՑ

Յունվարի 8-ին

Աշխարհային գեղեցիկ օրերին յարկուցեց ձմրան ցորտը և բուքը: Սահմանները կատարում են աշխարհում իրանց դերերը: Ինչպէս խիստ չափը, նոյնպէս և ցորտը ներգործում են մեր թոյլ ջրերի վրա, ուստի աւելի հանդիստ վայելելու համար ենթարկվում ենք Մորփեոսի ազդեցութեանը. — ընում ենք թէ ցերեկը վառարանի մօտ և թէ գիշերը տաք անկողնում: Այո, անուշ նինջը յաղթել է մեզ և մենք չենք անհում լոյս աշխարհում կատարվածները. չենք նկատում և չենք հեհեղաբերվում անընտան մեզ ման արարածների կենցաղով:

Նկեղեցում քարոզում է հայր ձերմակեան, նկարագրում է զէյթունցիների տխուր վիճակը.

հրաւիրում է օգնութեան ձեռք մեկնել անտուն անտէր, առաւայեալ եղբայրներին, յանձնածոցով է ընտրվում, բայց ձմրան ցորտը վրա հասնելով յանձնածոցովը վաղաժամ է համարում գործ շարունակելը, այլ սպասում է մի նոր և գեղեցիկ օրվան (դուցէ արեալարձին):

Հեռուստի գիւղերից և աւաններից ուրախութեամբ լսում ենք թէ որպիսի համերայնութեամբ և անձուրութեամբ տեղական ուսուցիչներն իրանց գիւղի և նշանակութեան արժանավայել ծառայողներն մատուցանելով, գրաւում են հասարակութիւնը թատերական ներկայացումներով, գրականական երեկոյներով և այլն, իսկ մեր 20 անդամից բաղկացած ուսուցչական պերսոնալը աւելի լաւ է համարում երեկոյն կուրսերում լըրադիր կարգաւ դնալ (իր սեփական միջոցով լրագիր չը ստանալու համար) և հանդիստ առնել, երկրորդ օրվայ ծանր աշխատութիւնները կատարելու համար կազմուած ներկայանալու. (երկար ջրունը կազմուած է մտաւոր և ֆիզիկական ուժերով):

Մեր հոգեբանականները, ամենայն յօժարութեամբ յաճախում են եկեղեցի. վերջին տարիներում զգալի կերպով նուազեցան նրանց եկամտաները, ուստի հարկադրված նրանք հարկ միայն կարողանում են եկեղեցում գանձանակ շըրջեցնել յօգուտ իրանց, իսկ աղքատների գանձանակը դատապարտված է դաւթում ցրտի տակ ընկնու և հարկ է պատահում որ մի բարեպաշտ անձ վրոզվէ նրա ջուրը. իսկ զրա փոխարէն, փողոցներում և թէ եկեղեցու դռներում կանգնած է լինում միշտ մերկ և բոքիկ, անդամազուրկ և հիւանդ աղքատների մի լէզիօն. ով է նրանց մտիկ սուղը, երբ կանոնաւոր վարչութիւն (աղքատների հոգաբարձութիւն) չը կայ, և այդ մասին մտածելը նոյնպէս վաղաժամ է, որովհետև ցորտ է:

Շատերն ասում են, որ Բարեգործական ընկերութեան բաժինը կարող է իր հոգաբարձութեան տակ առնել աղքատների խնամախարութիւնը (ինչպէս առաջ), բայց ոմանք էլ ասում են, որ նրա իրաւունքից բարձր է. իսկ ես ասում եմ, քանի որ Բարեգործ. ընկ. տեղական բաժինը հաստատուէս վճակ է «ոչինչ անելը», ուստի և այդ պարտքից նոյնպէս պէտք է ազատ համարել. իսկ կենտրոնական վարչութեան որոշումը, թէ ըստ կանոնադրութեան ղեկավար փողոցը պէտք է ուղարկել կենտր. վարչութեանը, բոլորովին իրաւացի է, որովհետև ըստ անտարանին. «Կուք ոչ կարէք գործել և այլն»: Արեւին և Բարեգործական ընկ.

բաժինը նոյնպէս մրտում է. բայց ոչինչ, նա չար օրերին էլ քնում էր:

Յուրտ է, չէ. կարելի դատապարտել և մեր ինքնավարութիւնը, որ նա սահմանութեամբ է վերաբերվում իր պարտականութիւններին. մինչդեռ նրանից և հաշիւ է պահանջող չը կայ. եթէ պահանջող էլ լինի, այդպիսիների տաք բերանը շատ հեշտութեամբ կարելի է սառեցնել զանազան միջոցներով:

Յուրտ չէ միայն կուրսերում. կանաչ տեղանի երկրպագողները միշտ ջերմութեամբ յաճախում են իրանց ուստատեղին Պարահանդէսների մրցանակը տրված է զինուորական սօբարանին», իսկ թղթականի պատերազմը տանում է ջազա-քային կուրսը: Վայ կրուօփի գլխին, որի անուշը միայն կայ, իսկ ինքը փոխադրվեցաւ անյատարանութեան աշխարհը:

Յուրտ է, ցորտ. թող հանդիստ առնեն մեր մշակները, արհեստագործները և վաճառականները, մինչև ընտելութիւնը գլխայ մեզ վրա և իր վայրուն արեղակը ծագէ երկնքում, ջերմացնէ երկիրը, պարտադրեցնէ բուսականութիւնը. դուցէ այն ժամանակ արթնանալը և շունչ բաշխելը: Վայ մեր օրին, երբ ընտելութիւն իր պարտքը կատարելուց յետոյ էլ մենք դատապարտված մնանք անսարքութեան և անդադարութեան:

Ա. Ա.

ՆԵՐՎԻՆ ԼՈՒՐԻՆ

«Новое Время» լրագրում կարդում ենք, «Յունվարի 4-ին, 73 տարեկան հասակում կիցեց իր մահկանացուն Պետերբուրգի հայոց ս. Եկատերինէ եկեղեցու աւագ քահանայ Յովհաննէս Պողոսեանց: Հանգուցեալը աւարտել էր իր ուսումը Ասորիական հոգևոր սեմինարիայում: Երեսասարգական հասակում հանդուցեալի հանգամանքները այնպէս տխուր կերպով էին դասաւորվել որ նա, փորձանակ հոգևոր ակադեմիա մտնելու ուսումը չարունակելու համար, ստիպված էր տիրացութիւն անել Մոսկովայի հայոց եկեղեցու: Այնտեղ նա երկար չը մնաց և շուտով նոյն պաշտօնով փոխադրվեցաւ Պետերբուրգի ս. Եկատերինէ եկեղեցին: 1872 թուին հայր Պողոսեանց քահանայ ձեռնադրվեցաւ, իսկ 1882 թ.ին ս. Եկատերինէ եկեղեցու աւագ քահանայի կոչումն ստացաւ:»

ՎԵՐԻՆ-ԱՊՐԻԼԻՍԻՑ մեզ դրում են: Սա կողմերում մինչև գեկտեմբերի 25 հիւանալի եղանակն

նա ընէ, զանց կընէ: Նուրբան էֆէնդիի օրով ամեն ատեն փոթորկալից եղած Ազգ. Ժողովոյ նիստերն, հաւանորէն հանդարտ, մի քիչ մնում պիտի լինին այսուհետ այդ նիստերն:

Սիւնն պէյ յօժարամիտ է երկու տարի լաւ աշխատել և արդիւնաւոր պաշտօնավարութիւն մը ունենալ: Ի սրտէ բարեմայլութիւն ենք, իրեն, մանաւանդ որ շատ ծանր կացութեան մէջ ենք և բազմաթիւ են օրուան առկախ խնդիրներն:

Սիւնն պէյ իւր բարեյօժար տրամադրութեանց աջակից ունի ֆաղաքական Ժողովոյ ատենադպիրն Սըվաճեան պ. կարապետ, ֆաղաքական Ժողովոյ,— և թերեւ ամբողջ թիւրքիոյ հայոց—ամենէն եռանդուն անձը:

Գեռ. Թարմ երկամասորը մ'է պ. Սըվաճեան, բայց ազգային գործոց մէջ առաջին կարգի տեղ մը գրաւած է. հաշիւ թէ 30—32 տարեկան լինի և արդէն ամեն գործոց մէջն է: Պօլսոյ ամենէն մեծ դրամական հաստատութեան—Օսմանեան պանքային— գլխաւոր պաշտօնակալներէ մին է և յարգուած: «Արեւելքի» հիմնադիրներէն է. «Արեւելքի» վարչական Ժողովոյ ատենապետն է և նոյն թիւրքի զարգացման ջերմ և արդիւնաւոր կերպով աշխատող: Պ. Սըվաճեանի հետ շատ խնդիրներու մէջ կարելի է համակարծիք չը լինի և մինչև իսկ ուժգնապէս մարանչել նորա դէմ, բայց այնքան ուղղամտութեամբ և անկեղծութեամբ կը խորհի ու կը գործէ, որ կարելի չէ նորա հետ հակառակել և նորա դէմ թշնամանալ: Մինչև ցայսօր զինքն այսպէս ճանչցած ենք: Բազմաթիւ են իւր խորհուրդներն, որոց կից մեծ մասն իսկ կարենայ իրականացնել ֆաղաքական Ժողովոյ պաշտօնավարութեան միջոցին, արդէն բաւական գործ տեսած կը համարուի:

Պ. Սըվաճեան կոչուած լինելով երկու տարի լինել ազգային իշխանութեան ղեկաւոր գեկալարներէն մին, հաւանական է, որ այս ժամանակ

կամիջոցին համար հրաժարի «Արեւելքի» ատենապետութիւնէն. վասն զի թիւրքիոյ հայոց միակ գլխաւոր թիւրքի իւր անկախութիւնը պահելու համար, ազգային վարչութեան գործերն ազատօրէն գոյնելու կամ պարտաւորու համար, պէտք է որ նորա վարչութեան ատենապետն միանգամայն ազգային պաշտօնակալ չը լինի:

Միւս անդամոց մասին երկար գրելու հարկ չեմ տեսներ. երբ առիթ ներկայանայ կը խօսիմ. ինչպէս ըսինք, լաւ տրամադրութեան ունեցող անձինք են, յարգուած ու համակրութիւն կը վայելեն, բայց սպասենք իրենց գործոց, որպէս զի կարենանք դատել:

Երկու անասործ խնդիրներ ինքնին. արդէն վերջացած են ֆաղ. Ժողովոյ համար: Մին է Յօնիական ափանց առաջնորդին հրաժարեցուցման խնդիրն: Այդ առաջնորդ արդէն հրաժարուած լինելով, այլ ևս խնդրել վերջացած կը համարուի: Միւս խնդիրն է ըմբոս վարդապետի մը խնդիրը. բայց նորա պաշտպանի հրաժարականովը այդ խնդիրն ալ վերջացած է:

Կը մնայ իւր ամենակարեւոր խնդիր քրիստոնէից պատեմութեան և ժառանգութեան խնդիրն որոյ մասին արդէն երկարօրէն գրած եմ: Այդ խնդրոյ համար կարուած Գանձածոցովի տեղեկագիրն Պետական Ժողովի մէջն է. Ժողովոյ օրէնսդրական ճիւղն կը զբաղի ատով: Այդ ճիւղի նախագահն զանձուց նախարար ընտրուած լինելով, վերջինս նորա յաջորդից Եփեսոսի իւրաքանչիւր, բնակաւարտ, անդամատ է մեզ: Բայց այս խնդիրը արգելք լինելու, վասն զի շատ ստիպողական հարց մը չէ. դատական գործոց նախարար ձեւված լինելու խնդիրն է. ատկէ դատ, վերջապէս միայն շայտ չը վերաբերուր այդ խնդրին, այլ թիւրքիոյ բոլոր քրիստոնէից և քրիստոնէակալ համա-

րաշխութեամբ կուզեն գործել այս խնդրոց մէջ: Ի միջի այլոց կան երկու կարեւոր խնդիրներ՝ Միացեալ ընկերութեանց խնդիրն և ձերբակալութեանց խնդիրն:

Միացեալ ընկերութիւնը կը գտնուին ծանր վիճակի մէջ. կառավարութիւնը պարզապէս կուզէ որ այդ ընկերութիւնը վերնայ մէջտեղէն և նորա զարդոցները փակուին: Քանի մը անգամ իմաց տրուեցաւ ընկերութեան թէ պէտք է որ կառավարութեան կողմանէ ընկերութիւն վաւերացուի կամ թէ ոչ զարդոցները փակուին: Պատասխան տրուեցաւ թէ ընկերութիւնը և իւր զարդոցները Պատրիարքարանի իրաւասութեան ներքե ևս և քանի որ այժմ Պատրիարք չը կայ, ուրիշ պատասխան մը տալու կարելիութիւն չը կայ: Խնդիրն այստեղ մնացած է, երբ Մուշէն հեռագրի եկաւ թէ ուրիշ օրուան մէջ կամ ընկերութիւնը պէտք է վաւերացուի: Պօլսոյ Օսմանեան կրթական նախարարութեան կողմանէ կամ պէտք է որ զբարձր փակուի: Խնդրուեցաւ որ պայմանաժամն ամսուայ մը վերածուի, բայց Մուշէն եկած լուրերը կը հարգուին թէ զբարձր փակուած է:

Ոչ նուազ կարեւոր է ձերբակալութեանց խնդիրն: Գանձածոցովը մը կազմուած է արքունի պալատան մէջ. այդ յանձնածոցովը բաղկացած է մի քանի թիւրքերէ և նախագահն է Շահպաղ Էֆէնդի (այս ամսու իրաւութիւնն ընդունող հայը): Այդ Գանձածոցովը կը քննէ վերջի ժամանակներս հրատարակուած հայերէն տեսագիտներն, վկայներն, լրագիրներն, տեղեկանալու համար հայոց ազգային ձգտումներուն: Չերակալեալ անձինք խիստ հարցաբնութեանց ենթարկուած են: Մինչև ցարդ ու է անօրինութիւն չէ եղած և չենք կարծեր ալ որ ծանր դէպք մը պատահի: Մի քանի յանդուհի հրատարակութիւններ արտասահմանի մէջ կատարուած չեն կրնար նկատուիլ հայոց ձեռք տուներու արտայայտիչ: Այսու հանդերձ երկու-

րով և անհամբերութեամբ կը սպասէ ժողովուրդը թէ ինչ պիտի լինի:

Պ. Սարեան, Միացեալ-ընկերութեանց զբարձրներու անուշն, որ քարտուած էր, հրաման ընդունած է վերադառնալ քարտուային ի Պօլսոյ Պ. Սարեանի հայրն դիմելով Շահպաղ Էֆէնդիի, խնդրած է որ աղէջ ուր որ անկէ և տղան ազատէ. վասն զի ս և է մեքը մը չը կայ այդ տըղուն վրայ, այլ պարզապէս վարչական միջոցով աքտորուեցաւ: Շահպաղ Էֆէնդի այդ խնդիրն կատարած է. Պ. Սարեան պիտի անցնէ այստեղ մի նոր հարցաբնութիւն և յետ այնորիկ—եթէ բան մը չը գտնուի—ազատ պիտի թողուի:

Իսկ Պատրիարքական խնդրոյ համար կը թողուցնուր ուրիշ առիթ: Առ այժմ Գարութիւն Պատրիարք կէս—Պատրիարք է. Մոնտեան տունի առթիւ պիտի պատարայէ և շարահարութիւններ պիտի ընդունի: Ազգ. Ժողովոյ, Ազգ. վարչութեան կողմանէ պատգամաւորը պիտի ներկայանան:

Իզմիրի առաջնորդական թափուր աթոռի համար գանազան ընտրելիներ կան. սակայն մեծ ջանքեր կը լինին որ Նար-Պէյ խօսին սրբազան առաջնորդ չընտրուի:

Իզմիրի մէջ առ այժմ խաղաղութիւն կայ. Պ. Սպարթալեանի մասը արդէն սգոյ մէջ համակած է ամբողջ Ժողովուրդը: Կրտսի թէ Սպարթալեան 21/2 միլիոն բուլղարի հարստութիւն մը թողած է և բաւական կտակներ բրած ի նպաստ ազգային հաստատութեանց: Բայց դեռ որոշ բան մը չը կայ:

Հայկակ

էր անուամբ Ռեմիսիոնի ջերմաչափով արևի տակ մինչև 21 աստիճան տաքութիւն էր լինում, բայց զեկտեմբերի 24-ի զիշերը առաջին անգամ ձիւն եկաւ և եղանակը ցրտեց: Թանգութիւնը այս կողմերում շարունակուած է. ցորենի պուզը 1 ր. 40 կ. մինչև 1 ր. 60 կ. է ծախում: Այլուարի մեր ֆունտը 8 կոպէկ արժէ:»

ԲԱԳՈՒԻ Վարդապետական ընկերութեան խորհուրդը խնդրում է մեզ ապիկ հետեւելու: Հաստատուած Բագուի հաստատութեան 17 և 26-որդ յօդուածները՝ ներկայ յունվարի 30-ին, շարժած օր, երկուշաբթի 6 ժամ մին, տեղիս բաղադրանք ղուսայի դատարանի տեղի կուսնայ ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովի նիստը, ուր կը քննվեն անցեալ 1887 թուականի դրամական հաշիւները, կը քննվի ու կը հաստատուի ներկայ 1888 թուականի համար խորհրդի կազմած նախագիշտիկը, կը վճարվեն ընթացիկ գործերը և ապա կընտրվեն, երեք տարի ժամանակով մի նախագահ, մի դասնապահ, մի ատենադպր և խորհրդի վեց անդամ՝ ընկերութեան գործերը կառավարելու համար:»

Չմուտնայից ստացած մեր մասնաւոր նամակներէց երևում է, որ այնտեղի հայ երիտասարդներէց 8 հոգի դատի են ենթարկուած, մեղադրվելով դանազան հրապարակական ցոյցերի մէջ:

Ստացանք պ. Յ. Տէր-Արքայանից Բոստովում հրատարակած մեծագիր «Օրացոյցը» 1888 թին: Օրացոյցը բաղկացած է 208 էրեսից, և զերանցից 55 էրեսը կազմում են հայերէն և ռուսերէն լեզուներով օրացոյցը, իսկ միւս մասը պարսկերէնով է իր մէջ մի քանի հետաքրքրական տեղեկութիւններ, ինչպէս են՝ հայոց կեանքի նշանաւոր դէպքերի ժամանակագրութիւնը, փոստային և հեռագրական կանոնները, քաղաքները դրուագաւոր տարբեր նոր կանոնադրութիւնից, երկաթուղային տեղեկութիւններ և այլն: «Օրացոյցը» գինը ամեն տեղի համար 50 կոպէկ է:

ԵՐԵՎԱՆԻՑ մեղ գրում են: «Յունվարի 5-ին, մի թուրք՝ Բալա-Սուլթան անունով, իր երկու ընկերներէր՝ Մալալի Մահմադ Բարիւմ և Ալի անունով թուրքերի հետ միասին քաղաքի դաշտարի մօտ, առաւօտեան 8 ժամին հրացանով սպանցին Եւզոր Թեոսեան անունով հայ երիտասարդին և Գէորգ Չարգարեանց անունով հայ վաճառականին: Չարգարեանը փախան, և զերանցից երկուսը միւս օրը միայն ձերբակալվեցան: Յունվարի 7-ին թաղեցին երկու սպանվածներին: Սպանված Չարգարեանի եղբայրը հոգեհարկ փոխարէն նուրբից 50 ռուբլի թեմական դպրոցին, 50 ռուբլի Գայեանեան դպրոցին և 100 ռուբլի էլ նորաչէն եկեղեցուն:»

Աստրախանից Բոստովանով եղբայրներէց ստացանք 10 ռուբլի, որպէս զի այդ փողով ուղարկենք «Մշակի» մի տարեկան օրինակ մի որ և է հայոց դպրոցին: Այդ փողով կուղարկենք «Մշակի» մի օրինակ Բարսեղյանայի դիւղի հայոց ծըխական դպրոցին:

### ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԻՑ

Նիւ-Եորկ, 15 դեկտեմբերի 1887

Վերջերս ամերիկեան ժողովրդի խօսակցութեան միակ աւարկան և օրուան տաք խնդիրն էր Չիկագոյի դատարարեալ յեղափոխականաց ծանօթ գործը: Սոցա կախումն տեղի ունեցաւ անցեալ ամիկ 11-ին, նոյն օր բոլոր յեղափոխականաց տասնի ի վրայ եղան. թէև մեծ կռիւներ և մեծ անկարգութիւնք կանխկալուէին, սակայն ամեն ինչ խաղաղութեամբ անցաւ: Չիկագոյի քանի մը փողոցներու մէջ անթիւ բաղմոթիւնը լուսնած էին յիշեալ դատարարեալ կախազան յարձրացած ատեն, կախազանի վրայ մահապարտ թէև արտօնեալ էին ատենախօսութիւններ ընել, սակայն այդ անհելի ժամուն ատեն մի քանիսն միայն կարողացան մի քանի խօսք թողնել: Դատարարական կուսակիցք և համակրողք հազար ու մէկ զինուորներ ու ջանքեր ըրին իրենց ընկերներու աղաւթեալ համար, բայց ամեն ջանք ի դերն եկաւ, վասն զի օրէնքը նոցա պարտաւորուած էր 13-ին, որոյ հանդիսատես եղան իրը 300,000 ժողովուրդ, որոյ մէջ տիրութիւն, յուսահատութիւնք և կակիծի կատարեալ տիպարներ տեսնել շատ դժուրն էր նոյն օր: Չը մուսամ ըսել թէ դատարարեալը մին անձնատան եղած էր, մին ներդրութեան արժանացած և միւս մ'ալ արդէն մահու չէր դատարարուած: Կախազաններու մէջ մէկն միայն ամերիկացի է, մնացեալը Գերմանիայէ գաղթած են:

Մամուկներու միտքը, կըսեն, թէ սիկարայի թուղթի կը նմանի, ինչ որ գրելու լինիս հոն կընայ լուս տպուել և աղբեցութիւն ունենալ. սոսի կարգին մէջ ճշմարտութիւն ունենալ, ուսի կարգին ալ կուզայ մի անգամ ևս հաստատել զայս: Յեղափոխականաց պատմութիւն ճշմարտութիւնը դպրոցի տալիսերու ուսանող վրայ մեծ աղբեցութիւն կը թողու. սոքա անցեալները դատարան մը կը կազմեն. մին կը լինի դատարար, ուսանող քարտուղարք և ուրիշներ ալ յանցաւորք: Դատար կը սկսի, դատարարը յանցաւորներն մահու կը դատարարուէ, անմեղ պղտիկներն չուսն կը բերեն ու կախազան մը կը պատրաստեն. սոցա արարք ընդ բաւականին յաջող կընթանան. վերջապէս պահ մը յետոյ չորս դատարարեալք կախազան կը բարձրանան, տակաւին տղայական լաղ մ'էր, բայց կախումէն վերջ կերպը փոխուած էր. կախեալք մեռնելու վրայ էին, ինչ դարձուրել տեսարան. դուրսէն օդնողներ կը հասնեն և կախեալներն վար կառնուս չուսնէն գրեթէ կիսամեռ. կըսուի թէ սոցանէ մին վտանգաւոր վիճակի մը մէջ կը գտնուի:

Գէպեր կը պատմեն նորէն. ուրեմն ուրիշ մ'ալ մտնում, որ իր կարգին մէջ վիպասանութեան մը կը նմանի, բայց ճշմարտութիւն է: Մասաչուսէթս նահանգի Պարնետթիլը աւանի մօտերըն Սանտի հանքի ջրերուն մէջ անցեալներն ձկնորս մը մի սրուակ կը գտնէ, որն որ բանալով հետեւեալ պարտականող դրուակ մը կը գտնէ. «Սեպտեմբեր 10-ին, 1880 — Սիլեմի Բայթ շողեանին մէջ ենք, զայս կուղղեմ այն անձին, որ պիտի գտնէ սրուակս: Ի՞նչ վէճերէն 50 միլոնի չափ հեռի ենք, ժամը երկուշաբթի 2-ն է, ծոյն ալէկոծեալ, շողեանն ծանրապէս վնասուած է. կը վախում թէ ընաւ չը պիտի կրնանք տուն վերադառնալ. զայս զերուած ատեն ամեն ինչ լաւ է, մեր միակ յոյսն է նաւ մը հանդիպել և երկիր իջնել, եթէ ոչ ամեն բան վերջացած է արդէն: Յուսանք որ այս գրութիւն պիտի կրնայ գտնուի՝ մեամ Սէնիս Մուրֆի, նաւապետ:

Միանչ Բայթ շողեանն յիշեալ թուին, 1888, Ֆիլադէլֆիայէն մէկնելէ վերջ, որոշեալ ժամանակին անցնելէ յետոյ, շողեանին տեսարք և նաւաստեաց աղգակներ յոյսերնին կտրեցին կորուսեալ շողեանէն լուր մ'առուուէ, բայց այսօր, 7 տարի վերջ, շուրբուր մէջէն խեղճ նաւաստեաց և նաւապետին մեռած լինելն հաղորդող սուրհանդակն եկաւ:

Ամերիկայ մէջ ժողովուրդն երկարակեաց է կըսեն, իրաւ է այս, կարծես մաթոսաղանբուր բնակարան եղած է նոր աշխարհն, մասնաւորապէս Միացեալ-Նահանգներն: Սանթիթէն անուն սեւաձիւղ կնիկ մը վերջերս մեռաւ Նաշուելի մէջ 104 տարեկան. նոյն նահանգին ամեն ձեռ անձն էր այս, որ զօրավար ձագարնի ատեն դերի մ'էր միայն: Տեղին Մարթալ Կէլթըրը, Սթըր Պէթթէմ-ցի նշանաւոր ծերուակ մ'է 108 տարեկան, շատ առողջ է դեռ. ակնոց չի կրեր և շատ զօրաւոր է: Ուրիշ կին մ'ալ կայ, որ կը բնակի ի ֆրոսփիթթ Էիջ. սա ծնած է 1778 թ. օգոս. 14-ին. իր հայրն Ուաշինթընի ջով խոհարարութիւն ըրած է երկար ատեն, իսկ իր ամուսինն ծառայած է 1812 թ. պատերազմին մէջ: Սա կինն ալ զօրաւոր է այժմ և կը կընէ 135 ֆունտ:

Նոր տարին կը մտնանայ, Նիւ-Եորկ կը սկսի դարդարուել. նոր տարեւայ ծառերն կը սկսին պատրաստուել. փողոցներու մէջ կահաւորակներ կը պատրաստուին, խաղաղքներ և այլ նոր տարաբնու ընծաներ վաճառելու համար: Նոր տարիի ծառը անշուշտ ծանօթ է ձեր ընթացողներուն, բայց և այնպէս քիչ ինչ տեղեկութիւններ աւելորդ չեմ սեպեր յաջող նամակաւ, նկարագրելով ամերիկեան ժողովրդին կիսանքի մէկ կողմն նոր տարուայ առթիւ:

Հ. Էկինեան

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Սրանից մի քանի ժամանակ առաջ Բերլինի լրագիրները լուր տարածեցին, որ կոմս Անդրաշի նշանակվելու է Բերլինի աւարտական դեսպան: Այժմ վիէննայից գրում են, որ այդ լուրը անհիմն է:

— Փարիզի դիպլոմատական շրջաններում, ինչպէս գրում են այնտեղից, շատ զօրոհ և գրգռված են այն ցոյցերի առիթով, որը Խալիսան արտայայտում է դէպի Ֆրանսիան, սկսած այն օրից, երբ միացել է գերմանա-աւստրիական դաշնակցութեանը: «Matin» լրագիրը Խալիսայի այդ անտեղի ցոյցերի դրոշմ համարում է իշխան Բիսմարկին:

— Բերլինի մի քանի լրագիրներ նկատում են, որ պրինց Ֆերդինանդ ոչ միայն առանձին երկիր չէ կրում մի քանի պետութիւնների կողմից իրան ուղղած սպառնալիքներից, այլ և միանգամայն իրան ապահով դրալով բոլորական դահի վրա, ձեռք է առել ամբողջ կառավարութեան ղեկը:

— Բրիտանից հեռագրում են, որ պատերազմական միջնորդութիւնը մտադիր է նոր փոխառութիւն պահանջել Բէլգիայի պաշտպանողական ոյժերը սեռանելու համար:

— «Nord» լրագրի Պետերբուրգի թղթակիցը խօսելով քաղաքական այժմեան դրութեան մասին, նոյնքան անհասկանալի է համարում այն բոլոր յոյսերը, որոնք այժմ դրոյթիւն ունեն խաղաղութեան մասին, որքան անհասկանալի էր այն բոլոր երկիւղը, որը գրոյթիւն ունէր մի քանի ժամանակ առաջ՝ պատերազմի վերաբերութեամբ:

— Պոլսից հեռագրում են հետեւեալ նորութիւնը. «Ղուր կայ, որ Բ. Գուռը բոլորական դահի համար առաջարկելու է չեքօզօրցի մի իշխանի: Սակայն օչինչ լուր չը կայ այն մասին, թէ արդեօք Բ. Գուռը վճռել է հեռացնել տալ պրինց Ֆերդինանդին. «Nord» լրագիրը այն միտքին է յայտնում, որ Կոբուրգի պրինցին հեռանելու ուղղակի Բ. Գրան գործն է:

### ՄՇԱԿԻ ԷՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍՏՈՒՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. 13 յունվարի: Պետերբուրգի նահանգական դատարանը, Օբլաստիան հիւանդանոցի օրվիստոր Գէրշայմանի գործը քննելով, որը մեղադրուած էր մի հիւանդ պառակտի հիւանդանոցը չընդունելու մէջ, որի հետեանքը հիւանդի մահն էր, վճռեց վրկել Գէրշայմանին առանձին իրաւունքներից և երեք տարով աքսորել Արխանգելսկի նահանգը: Մի և նոյն ժամանակ դատարանը որոշեց՝ միջնորդել որպէս զի այդ պատժի փոխարէն մեղադրեալը մէկ ամսով բանտարկվի հաուպտախտում:

ԲԵՐԼԻՆ. 13 յունվարի: Ֆրեդրիխսթուէում ճաշի ժամանակ իշխան Բիսմարկի հիւրերէց մէկին ասեց. «Երկու կամ երեք տարիների ընթացքում չը պետք է պատերազմի երկիրը կրկ: Այդպիսի յոյս այս տարի կարող եմ բաւական ուրջ կերպով յայտնել: Իրաւ է, որ 1870 թուին ևս այդպէս էին մտածում, բայց հակառակն եղաւ:»

ՎԻԷՆՆԱ. 13 յունվարի: «Polit. Correspondenz» լրագրին հեռագրում են Կ. Պոլսից, թէ այն ժամանակից որ Բուրգասում ապստամբութեան փորձը անաջող վախճան ունեցաւ, ապստամբների էլի մի քանի փոքրիկ խմբեր աշխատում էին մտնել Արևելեան Բուսթըլա. մի քանի մարդկանց դեռ թուրքերն էին բռնել. շատերը Արևելեան Բուսթըլա մտնելու ժամանակ զինաթափ էին արված. միայն 50 մարդիկ են զերի առնուած. արշաւանք գործելու պատրաստութիւնները ըստ երևոյթին, Աթէնքումն են կատարվում: Այն լուրը, թէ Յանկովիչն առաջարկված է հեռանալ Թիւրքիայից, մինչև այժմ դեռ չէ հաստատվում: — «Neue Freie Presse» լրագրի Բուխարէստից ստացված տեղեկութիւնների համեմատ, բուխարական վճառչինջ ատենը վճռեց Բուխարայում ծնված հրէաներին օտարազգիներ համարել:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. 13 յունվարի: «Тражданикъ» լրագիրը հաղորդում է, որ պետական խորհրդի մէջ չուսով կը քննվի բանտարկների կեանքը ապահովելու համար:

վաղնոյ պետական դրամարկներ հիմնելու հարցը: Ենթադրութիւն կայ այդ դրամարկներին մասնակցելու պարտաւորութիւնը տարածել և երկաթուղային յանձնաժողովների վրա՝ շարժական մասի ծառայողների կեանքը ապահովելու վերաբերութեամբ:

ՍՕՖԻԱ. 13 յունվարի: Հաղորդում են, որ Ռուչուկի նախկին պրիֆէկտ Մանուիլ ձերբակալված է, հակակառավարչական գործերի մէջ կասկածվելով:

Կ. ՊՈԼԻՍ. (Վարնայի վրայով) 13 յունվարի: Սուլթանի հրամանով, մեծ-վիզիրը հրաւրեց չորս անուանի հայեր, որպէս զի նրանք բացատրութիւն տան կառավարութեանը՝ Թիւրքիայում չգոյութիւն ունեցող հայկական գաղտնի ընկերութիւնների, Եւրոպայի հայոց ազխատարների, և հայերի դժգոհութեան պատճառների մասին: Հըրաւիրված անձինքը վկայեցին, որ հայերը հաւատարիմ են Սուլթանին, և որ իրերի ներկայ դրութեան վերաբերութեամբ Բ. Գուռը ինքն է մեղաւոր, ըստ որում նա սխտեմաբար աշխատում է թուլացնել հայոց պատրիարքի իշխանութիւնը: Յիշեալ անուանի հայերը խորհուրդ տուցին Բ. Գրանը զիջանել պատրիարքի պահանջներին և վերականգնեցնել նրա արտօնութիւնները: Այդ տեսակցութիւնից յետոյ, մեծ վիզիրը հրաւրեց հայոց պատրիարքին, որը և եկաւ Բ. Գուռը: Հաստատուած են, որ 200 հայեր են ձերբակալված, և որ իբրև թէ Սէր Ռայտ դիմել է Բ. Գրանը՝ հարցապնդում անելով հայկական գործերի վերաբերութեամբ: Սակայն այդ լուրը չէ հաստատվում:

ՍՕՖԻԱ. 13 յունվարի: Շատ անգամ ստացված հաղորդագրութիւնների պատճառով, որոնք տեղեկացնում են թէ Բուրգարիայում պատրաստվում են յեղափոխական նոր ցոյցեր անելու, ջրային և ցամաքային սահմանադրի վրա նախապաշտպանութեան աւելի խիստ միջոցներ են ձեռք առնված:

ՓԱՐԻՋ. 13 յունվարի: Նանսիի մօտ որսորդի հետ պատահած դէպքը օչինչ հետեանք չի ունենայ. սահմանի կանոնները չեն խախտված. չը կայ նոյնպէս և մասնաւոր դժգոհութիւն:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. 14 յունվարի: Մոսկովայի համալսարանում պարսիստեղծները կը սկսվեն յունվարի 21-ին: Գասախութիւններ և գործնական պարագմունքներ սկսելու կարգը կորոշի համալսարանի իշխանութիւնը: «Journal de St. Petersburg» լրագիրը ուշադրութիւն է դարձնում այն հանգամանքի վրա, որ մի քանի օտար լրագիրներ սխտեմաբար յուզել լուրեր են տարածում Ռուսաստանի մասին, օրինակ «Pester Lloyd», և «Times» լրագիրները հաղորդեցին ռուսաց նոր փոխառութեան նախաքի մասին պատերազմական նպատակների համար, այն ինչ Ֆինլանդների միջնորդը պարզ յայտնեց, որ ինքն փոխառութեան կը դիմի միայն երկաթուղիներ չիսելու համար, որոնք անպայման շահաւէտ են ռուսաց արդիւնաբերութեան համար, և այն էլ միայն այն դէպքում, եթէ փոխառութիւնը Ռուսաստանի համար շահաւէտ պայմաններով կը կայանայ. միւս կողմից «Kölnische Zeitung» հաղորդեց երկու յուզել լուր, որ կողմաւան զօրաբանակներից մէկը իբրև թէ հրաման է ստացել գնալ դէպի աւստրիական սահմանը և որ իբր թէ Ռուսաստանը չըրում դրաւելու միտք ունի: Այդ երկու լուրերը փոխադրեալպէս միմեանց հերքում են, որովհետեւ եթէ Ռուսաստանը իրան վերագրեալ դիտաւորութիւններն ունենար, չէր պակասեցնի իր զօրքերի թիւը կովկասում:

ՓԱՐԻՋ. 14 յունվարի: Երէկ մի ինչ նախադար բանդակաւորած աշխատում էր մտնել Սէլեսենսն պալատը հանրապետութեան նախագահին սպանելու համար: ՍՕՖԻԱ. 14 յունվարի: Բուրգարիայի դրութիւնը քանի գնում է խճճվում է: Սօֆիայի և Ֆիլիպօպոլի մէջ գտնված բոլոր միջանկիւղ կայարանները գրաւված են ժանդարմներով և զօրքերով կօբուրդեան իշխանի Ֆիլիպօպոլ գնալու պատճառով:

Կ. ՊՈԼԻՍ. 14 յունվարի: Նէլիով յայտնեց Բ. Գրանը, որ Ռուսաստանը ընդդէմ չէ անկո-ֆըրանսիական դաշնագրութեանը Սուէզեան ջրանցքի մասին:

ԲԵՐԼԻՆ. 14 յունվարի: Լօրէ Չէրչիլ խօսելով «Daily Telegraph» լրագրի պատուով թղթակցի հետ, ասեց, որ Պետերբուրգում ռուսաց ժողովուրդների հետ ինչն չէ խօսել և որ բոլոր լուրերը՝ քաղաքական նպատակներով Ռուսաստան

